

**ԿԱՐԱՊԻԿՈՍՈՒԹԻՒՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ  
ԱՆԹԻՀԵԱՍ - ԼԻՐԱՆԱՐ**

Անդրիաս, 11 Ապրիլ 1981

**Ամենապատիւ**

**Տ. Եղիշէ Արքապս. Տէրտէրեան**

**Պատրիարք Հայոց Երուսաղէմի**

**Երուսաղէմ**

Սիրեցեալ Եղբայր ի Քրիստոս,

Տեսոն մերոյ Յիսուսի Քրիստոսի նրաւակառ Յարութեան տօնին կը մօտենանք: Վասահարար ամենուրեք ցնծութեան նախասօն է՝ այս օրերուն վաղուան Մաղկազարդին եւ զալիք տօնական մեծագոյն օրուան՝ Զատկին առիբով: Արդարուէն, բոլոր Քրիստոնեաներու սրտեր կը լեցուին հոգեկան յուսավառ եւ խանդակից արդրումներով, մահուան վրայ Քրիստոսի կաղաք տարուած յաղբանակի զաղափարին ներգործութեամբը:

Այդպէս չէ, սահիպն, պարագան այս տորի Խիբանանի ժողովուրդին համար: Նոր պատերազմական բախումնեւ ահս շաբարէ մը ի վեր խառնակ, անապահով եւ անձկալի լինաւիք մատնած են ժողովուրդի բոլոր խաւերը, որոնց շարքին նաև մեր հայ ազգի զաւակները: Այս նոր կոինները պատճառ դարձան մարդկային նոր զաներու, վիրաւերերու, քանդամներու, տեղափոխութիւններու: Ստործեցին սարսափի անձկալից վիճակ մը:

Ահա այսպիսի մընոլորտի մը մէջ է որ Զեզի կ'ուղղենք Մեր այս զիրը նախ Շնորհաւուրելով Ձեզ Զատկական տօնին առիբով եւ մաղթելով Ձեր Եղբայրութեան, Երուսալիմի Պատրիարքութեան, Ս. Ճակոբեանց ուխտեալ Միաբանութեան եւ Ձեր բոլոր զործակիցներուն հոգենորոգ եւ կենսալից բեղուն զործունելութիւն, մեր Տիրոջ յարութեան դէպիքին ներենչած յոյսով նայելու դէպի ապագայ, դէպի մեր ժողովուրդի յարութեան տենչին եւ ձգտումին ամբողջական իրազործումը:

Ապա կը խնդրենք Ձերդ Եղբայրութենէն որ աղօքէֆ Լիբանանի խաղաղութեան եւ մեր ժողովուրդի անզորութեան եւ վերականգնումին համար:

Թող յարուցեալ Աստուածուրզոյն վրկարար սէրը բազաւորէ բոլորի հոգիներուն մէջ, որպէսզի ստեղծուի այնքան անձկուէն բաղձացուած անդրութիւնն ու ապահովութիւնը:

Եղբայրական սիրոյ զերմ ողջունիւ

Աղօքակից

Գ. Ա. Ր Ե Գ Ի Ն Բ.

Աքոռակից Կաքողիկոս

ԽՈՐԷՆ Ա.

Կաքողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ

**LAMBETH PALACE, LONDON, SE1 7JU  
EASTER 1981,**

His Beatitude Yeghishe Derderian,  
Armenian Patriarch of Jerusalem.

Your Beatitude,

“Be not affrighted. You seek Jesus of Nazareth who was crucified.  
He is risen ... Go your way ... He goes before you. You shall see Him.”  
(Mark 16:6-7)

God's Messenger speaks to three women who seek Jesus, and to everyone who has ever done so.

He proclaims our faith in Jesus who is alive and who leads each one of us into His way of salvation for us.

“CHRIST IS RISEN”

With these same words I greet you, Your Beatitude, praying that Joy and Peace may be yours this Eastertide.

Your Beatitude's affectionate Brother in Christ,

ROBERT CANTUAR  
Archbishop of Canterbury  
Primate of All England and Metropolitan

ՀԱՅԿԱՆ ԲՈՐԵԳՈՐԾՎԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՌԻԹԻՒՆ

Ապրիլ 3, 1981

Ամենապատիւ Տ. Եղիշէ Աբքէցլս. Տէրտիչեան  
Պատրիարք Հայոց Երուսաղէմի  
Երուսաղէմ, Խորայէլ

Ամենապատիւ Տէր,

Քրիստոսի հրաշավառ. Յարութեան մօտալուտ տօնին առիթով, մեր մտածումները կ'ուղղուին դէպի մեր Եկեղեցւոյ նուիրապետական Սթոռները, ուրկէ մեր հոգեւոր իշխանները կ'առաջնորդեն իրենց հօտը դէպի ապահով հորիզոններ:

Սփիւրահայ կեանքի տագնապալի այս հանգընուանին մեր ազգը աւելի քան երբեք պէտք ունի ոգեկան կորովի և հոգեւոր առաջնորդութեան: Մեր սրտազին մաղթանքն է որ բնութեան այս զարթօնքի տօնը նոր աւին եւ ոգեւորութին պարզեւէ Զեզի, որպէսզի շարունակէր անխափան կերպով իրագործել Զեր սրբազան առաքելութիւնը ի պայծառութիւն մեր Եկեղեցւոյ եւ մեր ժողովորդին:

Այս առթիւ կու գանք զերմօրէն շնորհաւորել Զեզ եւ Զեր ազգանուէր եւ Եկեղեցանուէր գործակիցները:

Խորին Յարգանօք  
Ա. ՄԱՆՈՒԿԵԱՆ  
Նախագահ